

կտակին բողոք ձայնի լինէր լսելի ի բօթն նորին, զի ոչ մնայր սիրտ հողածնի եթէ ոչ դառնացեալ փղձկեցաւ ի գեղգեղելն զբանն կողկողագին. եւ այս ի փառս Տեառն է իւր յօրինողին եւ աղօթքն սուրբ Հոգեւոր տիրին:

Արդ որպէս կամքն էր վերջին լուսաւոր հոգւոյն ի կամս վերին, կամք նորա ընդ Արարչին մերոյ օրհնեալ եզիցին վասն սորա եւ վասն մեր բարիոք խոկման նորա, զի կտակն որ հաստատեսցին որպէս որդեաց հնազանդից հօրն բարեաց կամեցողին, որ հաճեցաւ զսա մեզ գիտապետ՝ այսինքն զիւր կերպարան ի մեզ ճառագայթելով, զի ցնծացուք առ ժամանակ մի ի լոյս ճրագին, եւ անտես հօրն փոխանորդեալ հայր երեւելի՝ ի մեզ շաղկապել գիտաւորութիւնն նորին, զի երկուց կողմամբք մնասցէ սիրտք որդեացս առ հայրն բարին, որպէս եւ հասարակացս սիրտք ի ձեռն մաքուր հաւատոյս անխղելի գոլ առ ծայրագոյն բարին, կալ զմեօք մինչ ի կէտ կոչման սորին յերկարամօք եւ բարիոք կառավարութեամբ՝ աղօթիւք զսա մեզ կամեցողին եւ ի հաճոյս իւր ստեղծողին: Եւ այժմ զգիրս առ մեծութիւնդ, որ կերպարանդ ես Հոգեւորտիրին եւ փոխան Յիսուսի եւ տեղապահ սուրբ Լուսաւորչին, յօժարութեամբ եւ սեռն սիրով որպէս զազերս ընդունելի քեզ լիցին. զի որպէս ընտրեալն է ի ձէնջ, որպէս եւ յԱստուծոյ ի սկզբանէ, զոր ընտրեացն եւ կոչեցաւ, եւ արդ փառաւորեսցի ի ձեռն քոյին՝ ըստ որում առողքս զչնորհս փոխանակ շնորհաց փրկագործութեամբ խաչելութեան կենսատուին: Եւ զոր ինչ արքեպիսկոպոսաց եւ մայրաքաղաքացեաց պատիւս գնեն, խնդրեմք մաղթանօք զի եւ նոյն պարզ պատիւ ի սա ձրեսցին. եւ վասն կտակի Հոգեւորտիրին բարդ մեծարանաց ի սա ազգեսցին. եւ սակս ձերոյդ խնամոց վառելոց անդստին՝